Սանասար էլաւ դիւռ, տեսաւ Բաղդասարի աստղ խաւարեր ի։ Բաղդասար էնենց խմեր ի, ընկեր ի, ակահ չունի. էնդունք էլ առած գորզեր, թրեր, էկած Բաղդասարին. հրեշտակ Աստծուց էկեր էր, ձեռ բռնիր էր վրայ. ընդուր կողքեր խանդաք են[1]) դարձրած, էնքան գորզեր զարկած են. խրամանի Աստծուց էր, գորզ չէր դիպի։

—Ես տ'երթամ, քեռի։

Քեռին ասաց. «Մկայ Բաղդասար գլոխ դրեր ա մոր էրկու ծծի մէջ՝ քներ ա»։

Ականջ չարեց, էլաւ ձին խեծաւ. ձիուն ասաց. «Ե՞ր տի խաս-նիս իմ աղբոր»։

Ասաց. «Զև մի ղայլիւն[2]) խմես»։

Ասաց. «Զեղաւ»։

Ասաց. «Աչքեր խփես, բաց անես»։

Ասաց. «Զեղաւ»։

Ասաց. «Որ կարաս քե բռնես, ոտ դնես ուրքեր, չև մեկել ոտ խասցնես»։

Ձիու գլոխ պագնեց, խասուցուց աղբոր. կանչեց. «Է՛ Բաղ-դասար»։

Ասաց. «Է՛, ի՞նչ աղէկ քներ ի, չթողեցիր ես քնի»։

Ասաց. «Մէ էլ կուշտդ ըռըշկա[3])»։

Տեսաւ, որ կշտներ խանդաղ էր դարձեր։ Սանասար խասաւ թագաւորին էլ, մարդերուն էլ սպանեց, առաւ ուր աղբէր, էբի տուն։ Խորխուրդ արիցին. քեռայ վարդըպետ ասաց. «Ըստեղանք ձե տուն չի դառնայ»։

Էլան, իրանց մալ, ապրանք առան, գնացին. գնացին մէ վէ-րունի,) սար. որ տեսան էդ տեղ բան չկայ, ասին. «Էստեղ աղէկ ի, որ մենք մնանք»։

Էն տեղ կ'մնան, իրանց տուն կ'շինին։ Քանի տարի կ'շինին՝ Աստուած գիտի. մարդ չին գնդնի, որ տան անուն դնի։

---

[1]) Փոս։ [2]) Ծխամորչ քաշես։ [3]) Տես, նայիր։ [4]) Վայրենի, անապատ։